# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# Ա Վ Ա Գ Ա Ն Ի

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2013թ. N 14-Ա

### ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 Թ. ՄԱՐՏԻ 15-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. հաստատել Ջերմուկի համայնքի ավագանու 2013 թ. մարտի 15-ի նիստի հետևյալ **օ ր ա կ ա ր գ ը՝**

1.1. Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմում կառուցվածքային ստորաբաժանում ստեղծելու՝ Ջերմուկի համայնքի ղեկավարի որոշումը հաստատելու մասին
զեկ.Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի
քարտուղար Գ. Թադևոսյան

1.2. Ջերմուկի համայնքի ավագանու 2013 թվականի հունվար 18-ի N 7-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
զեկ. Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի
քարտուղար Գ. Թադևոսյան

1.3. Ջերմուկի համայնքի ավագանու 2013 թվականի հունվարի 18-ի <<Ջերմուկի համայնքում օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների 2013 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին>> N 4-Ն որոշման հավելվածում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին:
զեկ. Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի
քարտուղար Գ. Թադևոսյան

1.4.Ջերմուկի համայնքի 2013 թ. բյուջեում կատարված փոփոխություններն ու լրացումները հաստատելու մասին
զեկ. Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի
քարտուղար Գ. Թադևոսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Այվազյան Առուշան Մկրտիչի | [signature] | | |
| Արսենյան Արմինե Արագեղեցիկի | [signature] | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| Խանամիրյան Բագրատ Սենիկի | բացակա | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | | | |
| Հովակիմյան Հարություն Հայրիկի | | | |
| Հովհաննիսյան Գևորգ Վարդանի | | | |
| Մկրտչյան Մայիս Վարանցովի | | | |
| Պողոսյան Արթուր Վահրամի | | | |
| Ստեփանյան Վիգեն Արշակի | բացակա | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ - 8... դեմ -...0... ձեռնպահ -...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2013 մարտի 15
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2013թ. N 15-Ա

## ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ՝ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի 2-րդ պարբերության համապատասխան ավագանին ո ր ո շ ու մ է՝

1. Հաստատել Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմում վեց հաստիքային միավորով <<ֆինանսական բաժին>> անվամբ կառուցվածքային ստորաբաժանում ստեղծելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի որոշումը:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված բաժինը համալրվելու է Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում կատարվող համապատասխան փոփոխությունների ու լրացումների հետևանքով առաջացած թափուր հաստիքներով: Նշված փոփոխությունների արդյունքում աշխատակազմի հաստիքացուցակում հաստիքների թվի և աշխատավարձի ծավալի ավելացում չի կատարվում:

3. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման առաջին կետում նշված բաժնի ստեղծման հետևանքով քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում առաջացած փոփոխություններն ու լրացումները կներկայացվեն ավագանու հաստատմանը առանձին որոշմամբ:

4. Դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին՝ սույն որոշման 1-ին կետում նշված <<ֆինանսական բաժին>> անվամբ Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմում կառուցվածքային ստորաբաժանման ստեղծման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին>> N 27-Ա հրամանում, (այսուհետ՝ հրաման), կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

ա ) ուժը կորցրած ճանաչել հրամանով հաստատված Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի, (այսուհետ՝ անվանացանկ), համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի երրորդ ենթախմբի 1-ին , 2-րդ, կրտսեր պաշտոնների առաջին ենթախմբի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը:

• բ) անվանացանկի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի առաջին ենթախումբը լրացնել առաջին կետով հետևյալ բովանդակությամբ.

<<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ (2.1-1)>>,

գ) անվանացանկի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջին ենթախմբը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ կետերով.

-<<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ (3.1-9)>>,

-<<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ (3.1-10)>>,

-<<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ (3.1-11)>>,

-<<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ (3.1-12)>>,

-<<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ (3.1-13)>>:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Այվազյան Առուշան Մկրտիչի | | | |
| Արսենյան Արմինե Արագեղեցիկի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Խանամիրյան Բագրատ Սենիկի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | | | |
| Հովակիմյան Հարություն Հայրիկի | | | |
| Հովհաննիսյան Գևորգ Վարդանի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Մկրտչյան Մայիս Վարանցովի | | | |
| Պողոսյան Արթուր Վահրամի | | | |
| Ստեփանյան Վիգեն Արշակի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ - 8 դեմ - 0 ձեռնպահ - 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2013 մարտի 15
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2013թ. N 16-Ա

## ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 7-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետին, 3-րդ կետին և 6-րդ կետի 2-րդ մասին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ** է՝

1. Ջերմուկի քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի հունվարի 18-ի «Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի և ենթակա բյուջետային հիմնարկների աշխատակիցների 2013 թվականի թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 7-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

   1) որոշման համարակալման <<Ն>> տառը փոխարինել <<Ա >> տառով:
   2) հաստատել Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի և ենթակա բյուջետային հիմնարկների աշխատակիցների 2013 թվականի թվաքանակը՝ համաձայն N 1 հավելվածի:
   3) հաշվի առնելով, որ Ջերմուկի համայնքի ավագանու 2013 թվականի մարտի 15-ի N 15-Ա որոշմամբ քաղաքապետարանի աշխատակազմում ստեղծվել է <<ֆինանսական բաժին>> անվամբ կառուցվածքային ստորաբաժանում, ինչպես նաև <<Նվազագույն ամսական աշխատավարձի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նվազագույն աշխատավարձը սահմանված է 35000 դրամ՝ սույն որոշման առաջին կետում նշված որոշմամբ հաստատված բոլոր հաստիքացուցակներում կատարել լրացումներ ու փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ համաձայն N 2 և N 3 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Այվազյան Առուշան Մկրտիչի | [signature] | | |
| Արսենյան Արմինե Արագեղեցիկի | [signature] | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| Խանամիրյան Բագրատ Սենիկի | բացակա | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | | | |
| Հովակիմյան Հարություն Հայրիկի | | | |
| Հովհաննիսյան Գևորգ Վարդանի | | | |
| Մկրտչյան Մայիս Վարանցովի | | | |
| Պողոսյան Արթուր Վահրամի | | | |
| Ստեփանյան Վիգեն Արշակի | բացակա | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ - .8.. դեմ -...0.... ձեռնպահ -..0.....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2013 մարտի 15
Ջերմուկ

Հավելված 1

Ջերմուկի քաղաքային համայնքի
ավագանու 2013թ մարտի 15-ի N 16-Ա որոշման

ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ

Քաղաքապետարան - 42 միավոր,
այդ թվում՝ քաղաքի սանմաքրման և
աղբահանության աշխատողներ - 29 միավոր

Առանձնացված ստորաբաժանումներ՝

սոցիալական ծառայությունների տարածքային բաժին – 6 միավոր
քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժին – 1 միավոր

Կառուցվածքային ստորաբաժանումներ՝

ֆինանսական բաժին – 6 միավոր
Ներքին աուդիտի բաժին – 1 միավոր

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ

Ջերմուկի համայնքի ճոպանուղի – 13 միավոր
Ջերմուկի համայնքի շախմատի դպրոց – 2 միավոր
Մանկապատանեկան մարզադպրոց – 4,5 միավոր
Ջերմուկի համայնքի քաղաքային գրադարան – 5 միավոր
Ջերմուկի համայնքի մանկապարտեզ /ՆՈՒՀ/ - 22,73 միավոր
Ջերմուկի համայնքի թիվ 1 արվեստի մանկական դպրոց ՀՈԱԿ – 5,5 միավոր
Ջերմուկի համայնքի թիվ 2 արվեստի մանկական դպրոց ՀՈԱԿ – 5 միավոր

ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. Է.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված 2
Ջերմուկի քաղաքային համայնքի
ավագանու 2013 թվականի մարտի 15-ի
N 16-Ա որոշման

## ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | հաստիք | պաշտոնային դրույքաչափ | դրույք | հավելավճար՝ 20% ոչ ավել 8000դրամ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 166300 | 166300 | 8000 | 174300 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 134850 | 134850 | 8000 | 142850 |
| 3 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 134850 | 134850 | 8000 | 142850 |
| 4 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 111800 | 111800 | 8000 | 119800 |
| 5 | Գլխավոր մասնագետ-ճարտարապետ | 1 | 111800 | 111800 | 8000 | 119800 |
| 6 | Առաջատար մասնագետ | 1 | 69050 | 69050 | 8000 | 77050 |
| 7 | Ընդունարանի գործավար | 1 | 51730 | 51730 | 8000 | 59730 |
| 8 | տեղեկատ. Համակարգի օպերատոր | 1 | 51730 | 51730 | 8000 | 59730 |
| 9 | Հավաքարար | 1 | 65585 | 65585 | 8000 | 73585 |
| 10 | պահակ | 2 | 46300 | 92600 | 16000 | 108600 |
| 11 | վերելակավար | 1 | 46300 | 46300 | 8000 | 54300 |
| 12 | վարորդ | 1 | 51730 | 51730 | 8000 | 59730 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *13* | *1042025* | *1088325* | *104000* | *1192325* |

## ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | հաստիք | պաշտոնային դրույքաչափ | դրույք | հավելավճար՝ 20% ոչ ավել 8000դրամ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բաժնի պետ | 1 | 132362 | 132362 | 8000 | 140362 |
| 2 | ՍԾՏԲ հաշվապահ | 1 | 69050 | 69050 | 8000 | 77050 |
| 3 | ՍԾՏԲ գլխավոր մասնագետ | 1 | 115000 | 115000 | 8000 | 123000 |
| 4 | ՍԾՏԲ առաջատար մասնագետ | 1 | 92000 | 92000 | 8000 | 100000 |
| 5 | ՍԾՏԲ առաջատար մասնագետ | 1 | 87000 | 87000 | 8000 | 95000 |
| 6 | ՍԾՏԲ 2-րդ կարգի մասնագետ | 1 | 63000 | 63000 | 8000 | 71000 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *6* | *558412* | *558412* | *48000* | *606412* |

## ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԲԱԺԻՆ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | հաստիք | պաշտոնային դրույքաչափ | դրույք | հավելավճար՝ 20% ոչ ավել 8000դրամ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | ՔԿԱԳ բաժնի պետ | 1 | 117665 | 117665 | 8000 | 125665 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *1* | *117665* | *117665* | *8000* | *125665* |

## ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | հաստիք | պաշտոնային դրույքաչափ | դրույք | հավելավճար՝ 20% ոչ ավել 8000դրամ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | ֆինանսական բաժնի պետ | 1 | 127000 | 127000 | 8000 | 135000 |
| 2 | բաժնի առաջատար մասնագետ | 5 | 69050 | 345250 | 16000 | 361250 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *6* | *196050* | *472250* | *24000* | *496250* |

## *ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ*

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | հաստիք | պաշտոնային դրույքաչափ | դրույք | հավելավճար՝ 20% ոչ ավել 8000դրամ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Աուդիտորական բաժնի պետ | 1 | 127000 | 127000 | 8000 | 135000 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *1* | *127000* | *127000* | *8000* | *135000* |

## *ՔԱՂԱՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ*

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | հաստիք | պաշտոնային դրույքաչափ | դրույք | հավելավճար՝ 20% ոչ ավել 8000դրամ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մեխանիկ-վարորդ | 1 | 104850 | 104850 | 8000 | 112850 |
| 2 | Բրիգադավար | 1 | 104850 | 104850 | 8000 | 112850 |
| 3 | Տրակտորիստ | 2 | 76000 | 152000 | 16000 | 168000 |
| 4 | Վարորդ | 1 | 111800 | 111800 | 8000 | 119800 |
| 5 | Վարորդ | 2 | 76000 | 152000 | 16000 | 168000 |
| 6 | Գրեյդերավար | 1 | 111800 | 111800 | 8000 | 119800 |
| 7 | Պահակ | 2 | 46300 | 92600 | 16000 | 108600 |
| 8 | Հավաքարարներ | 12 | 58700 | 704400 | 96000 | 800400 |
| 9 | Ջրող | 1 | 46300 | 46300 | 8000 | 54300 |
| 10 | Բանվորներ | 4 | 58700 | 234800 | 32000 | 266800 |
| 11 | Էլեկտրիկ-խառատ | 1 | 58700 | 58700 | 8000 | 66700 |
| 12 | Փականագոր-հավաքող բանվոր | 1 | 74000 | 74000 | 8000 | 82000 |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ* | *29* | *928000* | *1948100* | *232000* | *2180100* |

*ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ.Է.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ*

*Հավելված 3*
*Ջերմուկի քաղաքային համայնքի*
*ավագանու 2013 թվականի մարտի 15 -ի*
*N 16-Ա որոշման*

# ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

## Ջերմուկի համայնքի ճոպանուղի

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | հաստիք | պաշտոնային դրույքաչափ | դրույք | հավելավճար՝ 20% ոչ ավել 8000դրամ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 88700 | 88700 | 8000 | 96700 |
| 2 | Հաշվապահ | 0.5 | 80000 | 40000 | 8000 | 48000 |
| 3 | Օպերատոր | 2 | 65600 | 131200 | 16000 | 147200 |
| 4 | Դիզելավար | 1 | 65600 | 65600 | 8000 | 73600 |
| 5 | Հիդրավլիկայի մասնագետ | 1 | 65600 | 65600 | 8000 | 73600 |
| 6 | Էլեկտրիկ | 1 | 65600 | 65600 | 8000 | 73600 |
| 7 | Ռատրակավար | 0.5 | 58000 | 29000 | 5800 | 34800 |
| 8 | Տոմսավաճառ | 1 | 65600 | 65600 | 8000 | 73600 |
| 9 | Պահակներ | 3 | 46300 | 138900 | 24000 | 162900 |
| 10 | Հավաքարար | 1 | 46300 | 46300 | 8000 | 54300 |
| 11 | Հնկիչ | 1 | 65600 | 65600 | 8000 | 73600 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **13** | **712900** | **802100** | **109800** | **911900** |

## Ջերմուկի համայնքի Կարեն Արարատի Ասրյանի անվան շախմատի դպրոց ՀՈԱԿ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | հաստիք | պաշտոնային դրույքաչափ | դրույք | հավելավճար՝ 20% ոչ ավել 8000դրամ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 124000 | 124000 | 8000 | 132000 |
| 2 | Հավաքարար | 1 | 46300 | 46300 | 8000 | 54300 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **2** | **170300** | **170300** | **16000** | **186300** |

## Մանկապատանեկան մարզադպրոց

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | հաստիք | պաշտոնային դրույքաչափ | դրույք | հավելավճար՝ 20% ոչ ավել 8000դրամ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 62000 | 62000 | 8000 | 70000 |
| 2 | Բուժ. Քույր | 0.5 | 46300 | 23150 | 4630 | 27780 |
| 3 | Մարզիչ | 1 | 55000 | 55000 | 8000 | 63000 |
| 4 | Մարզիչ | 1 | 58000 | 58000 | 8000 | 66000 |
| 5 | Հավաքարար | 1 | 46300 | 46300 | 8000 | 54300 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **4.5** | **267600** | **244450** | **36630** | **281080** |

## Ջերմուկի համայնքի քաղաքային գրադարան

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | հաստիք | պաշտոնային դրույքաչափ | դրույք | հավելավճար՝ 20% ոչ ավել 8000դրամ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 98700 | 98700 | 8000 | 106700 |
| 2 | Գրադարանավար | 2 | 60000 | 120000 | 16000 | 136000 |
| 3 | Օպերատոր | 1 | 88400 | 88400 | 8000 | 96400 |
| 4 | Հավաքարար | 1 | 53000 | 53000 | 8000 | 61000 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **5** | **300100** | **360100** | **40000** | **400100** |

## Ջերմուկի համայնքի մանկապարտեզ ՆՈՒՇ ՀՈԱԿ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | հաստիք | պաշտոնային դրույքաչափ | դրույք | հավելավճար՝ 20% ոչ ավել 8000դրամ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 107200 | 107200 | 8000 | 115200 |
| 2 | Մեթոդիստ | 0.5 | 92600 | 46300 | 8000 | 54300 |
| 3 | Հաշվապահ | 1 | 74823 | 74823 | 8000 | 82823 |
| 4 | Գործավար | 0.5 | 46300 | 23150 | 4630 | 27780 |
| 5 | Փոխարինող անձ | 1 | 46300 | 46300 | 8000 | 54300 |
| 6 | Տնտեսվար-պահեստապետ | 1 | 51700 | 51700 | 8000 | 59700 |
| 7 | Խոհարար | 1 | 69050 | 69050 | 8000 | 77050 |
| 8 | Խոհարարի օգնական | 1 | 46300 | 46300 | 8000 | 54300 |
| 9 | լվացարար | 1 | 46300 | 46300 | 8000 | 54300 |
| 10 | Օժանդակ բանվոր | 1 | 46300 | 46300 | 8000 | 54300 |
| 11 | Դաստիարակ | 4.48 | 92600 | 414848 | 40000 | 454848 |
| 12 | Դաստիարակի օգնական | 4 | 46300 | 185200 | 32000 | 217200 |
| 13 | երաժշտության դաստատու | 0.5 | 92600 | 46300 | 8000 | 54300 |
| 14 | մանկավարժ | 0.75 | 92600 | 69450 | 8000 | 77450 |
| 15 | Հավաքարար | 1 | 46300 | 46300 | 8000 | 54300 |
| 16 | Պահակ | 2 | 46300 | 92600 | 16000 | 108600 |
| 17 | Բուժքույր | 1 | 46300 | 46300 | 8000 | 54300 |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***22.73*** | ***1089873*** | ***1458421*** | ***196630*** | ***1655051*** |

## Ջերմուկ համայնքի հ.1 արվեստի դպրոց ՀՈԱԿ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | հաստիք | պաշտոնային դրույքաչափ | դրույք | հավելավճար՝ 20% ոչ ավել 8000դրամ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 84000 | 84000 | 8000 | 92000 |
| 2 | փոխտնօրեն | 0.5 | 80000 | 40000 | 8000 | 48000 |
| 3 | Հաշվապահ | 0.5 | 80000 | 40000 | 8000 | 48000 |
| 4 | Քարտուղարուհի | 1 | 46300 | 46300 | 8000 | 54300 |
| 5 | Տնտեսվար | 1 | 46300 | 46300 | 8000 | 54300 |
| 6 | Հավաքարար | 1.5 | 46300 | 69450 | 8000 | 77450 |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***5.5*** | ***382900*** | ***326050*** | ***48000*** | ***374050*** |

## Ջերմուկ համայնքի հ.2 արվեստի դպրոց ՀՈԱԿ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | հաստիք | պաշտոնային դրույքաչափ | դրույք | հավելավճար՝ 20% ոչ ավել 8000դրամ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 84000 | 84000 | 8000 | 92000 |
| 2 | փոխտնօրեն | 0.5 | 80000 | 40000 | 8000 | 48000 |
| 3 | Հաշվապահ | 0.5 | 80000 | 40000 | 8000 | 48000 |
| 4 | Քարտուղարուհի | 1 | 46300 | 46300 | 8000 | 54300 |
| 5 | Տնտեսվար | 1 | 46300 | 46300 | 8000 | 54300 |
| 6 | Հավաքարար | 1 | 46300 | 46300 | 8000 | 54300 |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***5*** | ***382900*** | ***302900*** | ***48000*** | ***350900*** |

*ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ* *Գ.Է.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2013թ. N 17-Ն

## <<ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 4-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետին, 3-րդ կետին և 6-րդ կետի 2-րդ մասին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաշվի առնելով, որ <<Տեղական տուրքերի ու վճարների մասին>> Հայատանի Հանրապետության օրենքում 2012 թվականի սեպտեմբերի 11-ին և նույն թվականի դեկտեմբերի 6-ին կատարվել են լրացումներ ու փոփոխություններ՝ <<Ջերմուկի համայնքում օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների 2013 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին>> Ջերմուկի համայնքի ավագանու 2013 թ. հունվարի 18-ի N 4-Ն որոշման հավելվածում կատարել փոփոխություններ ու լրացումներ և շարադրել նոր խմբագրությամբ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Այվազյան Առուշան Մկրտիչի | | | |
| Արսենյան Արմինե Արագեղեցիկի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Խանամիրյան Բագրատ Սենիկի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | | | |
| Հովակիմյան Հարություն Հայրիկի | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Յովհաննիսյան Գևորգ Վարդանի | | | |
| Մկրտչյան Մայիս Վարանցովի | | | |
| Պողոսյան Արթուր Վահրամի | | | |
| Ստեփանյան Վիգեն Արշակի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ - ..8.. դեմ -...0... ձեռնպահ -...0....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2013 մարտի 15
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկի քաղաքային համայնքի ավագանու
2013թ. մարտի 15-ի թիվ 17-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Տեղական տուրքի անվանումը | Օրենքով սահմանված դրույքաչափը (հազ. դրամ) | ավագանու կողմից սահմանված դրույքաչափը (հազ.դրամ) | օրենքի 10-րդ հոդվածի մասը |
|---|---|---|---|
| 1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ | | | 10.1 |
| hիմնական օբյեկտների համար՝<br><br>1) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների,ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար | մինչև 15 | 4.5 | 10.1 ա) |
| 2) սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար | | | 10.1 բ) |
| ա. 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | մինչև 30 | 9 | 10.1 բա) |
| բ. 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտներ համար | մինչև 50 | 15 | 10.1 բբ) |
| գ. 1001-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտներ համար | մինչև 50 | 20 | 10.1 բգ) |
| դ. 3001-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | մինչև 100 | 50 | 10.1 բդ) |
| ոչ հիմնական շինությունների տեղադրման համար | | | 10.1 |
| 3) մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտներ համար | մինչև 3 | 0.9 | 10.1 գ) |
| 4) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտներ համար | մինչև 5 | 1.5 | 10.1 դ) |

| | | | |
|---|---|---|---|
| 2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների համար, (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի), եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | | | 10.2 |
| 1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն | մինչև 3 | 0.9 | 10.2 ա) |
| 2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով. | | | 10.2 բ) |
| 3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը: | | | 10.2 գ) |
| 3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար | մինչև 5 | 1.5 | 10.3 |
| 4.Համայնքի տարածքում՝<br>1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար | 0-17.5 | 7.5 | 10.4 (1) |
| 2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար | 1.5-17.5 | 7.5 | 10.4 (2) |
| 5.Համայնքի տարածքում՝<br>1) բացօթյա առևտրի կազմակերպելու թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար 1 քառակուսի մետրի համար | 0- 0.35 | 0.35 | 10.5 ա) |

| | | | |
|---|---|---|---|
| 2) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար.<br>ա. հիմնական շինությունների ներսում<br>բ. ոչ հիմնական շինությունների ներսում | 1-6<br>0-1 | 3<br>1 | 10.5 գա)<br>10.5 գա) |
| 3) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար | 50 - 100 | 100 | 10.5 դ) |
| 4) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար | 10 -20 | 20 | 10.5 ե) |
| 5) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր տարվա համար | 50 | 50 | 10.5.1. |
| 6. Համայնքի տարածքում խաղատները, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտները, բաղնիքները (սաունաները), զվարճանքի օբյեկտները՝ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ | | | 10.6 |
| 1) բաղնիքներ (սաունաներ) | 200-500 | 200 | 10.6 ա) |
| 2) խաղատներ | 500-1000 | 500 | 10.6 բ) |
| 3) շախմատներով խաղերի կազմակերպում | 250-500 | 250 | 10.6 գ) |
| 4) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար | 50-100 | 50 | ·10. 6դ) |
| 7. Համաքաղաքային կանոններին համապատասխան քաղաքային համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ | 0-5 | - | 10.7 |
| 8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քմ-ի տեղական տուրքը սահմանվում է՝ | | | 10.8 |
| 1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս պարունակող արտաքին գովազդի համար | 1-2 | 1 | 10.8 ա) |
| 2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) պարունակող արտաքին գովազդի համար | 2.5-3.5 | 2.5 | 10.8 բ) |
| 3) այլ արտաքին գովազդի համար | 0.5 – 1.5 | 1 | 10.8 գ) |
| 4) դատարկ գովազդային վահանակների համար | 0.7 | 0.7 | 10.8 ե) |

| | | | |
|---|---|---|---|
| 9.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար | 0-10 | 0 | 10.9 |
| 10. Ջերմուկ համայնքի անվանումը՝ <<Ջերմուկ>> բառը, ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար | 50-100 | 50 | 10.9 |
| 11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն ընթացիկ տարում իրականացնելու թույլտվության համար | 0-10 | 10 | 10.10 |

| Տեղական վճարի անվանումը | Ավագանու կողմից սահմանված վճարի չափը /հազար դրամ/ |
|---|---|
| Ջերմուկի քաղաքային համայնքի տարածքում շինարարության ավարտը փաստագրելու համար քաղաքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 10 |
| Ջերմուկի քաղաքային համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար քաղաքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 10 |
| Ջերմուկի քաղաքապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար | 10 |
| Ջերմուկի քաղաքային համայնքի տարածքում անշարժ գույքի ռեգիստրման վճար | 10 |

ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Է. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2013թ. N 18-Ն

## ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկի համայնքի 2013 թվականի բյուջեում կատարված փոփոխություններն ու լրացումները համաձայն N 1 հավելվածի.

1.1. ***Եկամտային մաս*** - վարչական բյուջե՝ 171190.1 հազար դրամ

ֆոնդային բյուջե՝ 19900.9 հազար դրամ

ընդամենը՝ 191091.0 հազար դրամ

Նշված փոփոխություններն առաջացել են հետևյալ պատճառներով.

1.1.1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 7-ի N 130-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից Ջերմուկի համայնքին հատկացվել է 5200.0 հազ. դրամ գումար համայնքի բյուջետային ծախսերի փոխհատուցման համար.

1.1.2. Ջերմուկի համայնքի հողի հարկի և գույքահարկի եկամտային բազաների ճշգրտման արդյունքում համայնքի բյուջեում ավելացել են ակնկալվող եկամուտները՝

-հողի հարկ գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության հողերից 5284.0 հազար դրամ (ներառյալ ապառքներն ու 365 օրը լրացած տույժերը),

-գույքահարկ փոխադրամիջոցներից 381.2 հազար դրամ (ներառյալ ապառքներն ու 365 օրը լրացած տույժերը).

1.1.3. Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից տրամադրվող միջոցները ավելացվել են 133.6 հազար դրամ գումարով.

1.1.4. Ջերմուկի համայնքում <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի, ընդունված 2012 թվականի դեկտեմբերի 6-ին, 2-րդ հոդվածին համապատասխան Ջերմուկ համայնքի անվանումը՝ <<Ջերմուկ>> բառը, ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար նոր տուրքի տեսակ սահմանելու հետևանքով ավելացվել է տարեկան 1000.0 հազար դրամ գումարով:

1.1.5. Համայնքի 2013 թվականի բյուջեի ֆոնդային մասը նվազեցվել է 74595.3 հազար դրամով:

*1.2.* ***Ծախսային մաս*** - վարչական բյուջե՝ 171190.1 հազար դրամ

ֆոնդային բյուջե՝ 19900.9 հազար դրամ

ընդամենը՝ 191091.0 հազար դրամ

2. Հաստատել Ջերմուկի համայնքի 2013 թվականի բյուջեն՝ սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխություններով ու լրացումներով համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Այվազյան Առուշան Մկրտիչի | [signature] | | |
| Արսենյան Արմինե Արագեղեցիկի | բացակա | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | [signature] | | |
| Խանամիրյան Բագրատ Սենիկի | բացակա | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | [signature] | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | [signature] | | |
| Հովակիմյան Հարություն Հայրիկի | [signature] | | |
| Հովհաննիսյան Գևորգ Վարդանի | [signature] | | |
| Մկրտչյան Մայիս Վարանցովի | [signature] | | |
| Պողոսյան Արթուր Վահրամի | [signature] | | |
| Ստեփանյան Վիգեն Արշակի | բացակա | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ - 8 դեմ - 0 ձեռնպահ - 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2013 մարտի 15
Ջերմուկ